ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ
Հեռ. 56 03 60, Էլ. հասցե foi@foi.am
FREEDOM OF INFORMATION CENTER NGO
1/3 Buzand street, 4th floor, Yerevan, RA

25.05.2012թ.
169-ի 7

ՀՀ գյուղատնտեսության նախարար
պարոն Սերգո Կարապետյանին

Տեղեկատվություն ստանալու կրկնակի հարցում

Հարգելի պարոն Կարապետյան,

21.03.2012թ.-ին Ինֆորմացիայի ազատության կենտրոնը տեղեկություն ստանալու հարցմամբ դիմել էր Ձեզ՝ խնդրելով տրամադրել հետեւյալ տեղեկությունները.

1. Քանի՞ կայք է ստեղծվել կամ վերամշակվել 2009, 2010 եւ 2011թ.թ.-ի ընթացքում ՀՀ գյուղատնտեսության նախարարության համար:
2. 2009, 2010 եւ 2011թ.թ.-ի ընթացքում որքա՞ն գումար է ծախսվել ՀՀ գյուղատնտեսության նախարարության պաշտոնական կայքի (կայքերի) մշակման (վերամշակման) եւ գործարկման համար ըստ տարիների:
3. Խնդրում ենք տրամադրել ֆինանսավորման աղբյուրները:

ՀՀ գյուղատնտեսության նախարարությունից ստացվել է պատասխան, որի համաձայն՝ ՀՀ գյուղատնտեսության նախարարության պաշտոնական www.minargo.am կայքը ստեղծվել է 2008թ.-ին, իսկ 2009-2011թ.-ին միայն թարմացվել եւ ձեւավորման մասնակի փոփոխությունների է ենթարկվել նախարարության աշխատանքային ռեսուրսների հաշվին: Պատասխանը, սակայն, չի ներառել Ինֆորմացիայի ազատության կենտրոնի խնդրած՝ նախարարության կայքի (կայքերի) ստեղծման եւ վերամշակման համար ծախսված գումարների չափի մասին տեղեկությունները:

Ուստի, ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 27 և 27.1 հոդվածների և “Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի դրույթներով՝ եւս մեկ անգամ խնդրում ենք տրամադրել բաց թողնված տեղեկությունները:

Կանխավ շնորհակալ եմ:

ԻԱԿ իրավաբան Գեւորգ Հայրապետյան